Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
հունվարի 30-ի N 78 - Ն որոշման

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի սեպտեմբերի 29-ի ՀՆԱ-8 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 18-ի N 42 արձանագրային որոշման N 1 հավելվածի 14-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության կողմից գրություններ են ուղարկվել 2014 թվականի սեպտեմբերի 27-ին (ԱԿ/22.2/10087-14) և հոկտեմբերի 3-ին (ԱԿ/22.2/10339-14) 53 դեղարտադրող կազմակերպություններին (հիմք՝ Հայաստանի Հանրապետության պետական գրանցամատյանում ընդգրկված դեղեր արտադրող տեղական և արտասահմանյան կազմակերպությունները)՝ ներկայացնելով պետության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող 36 անվանում դեղերի ցանկը՝ անմիջապես դեղարտադրողի հետ հնգամյա պայմանագիր կնքելու նպատակով:

Սահմանված ժամկետում պատասխաններ են ստացվել 9 դեղարտադրող՝ «Մեդոֆարմ», «Լե Լաբորատուար Սեղվիե», «Լիլի», «Բաքստեր», «Հոֆֆման Լա Ռոշ», «GSLԲեհրինգ», «Պերդաման», «Պոլֆա Տարխոմին» և «Գրինդեքս» կազմակերպություններից, որոնցից գնային առաջարկներ են ներկայացրել 5-ը, որոնցից միայն «Լե Լաբորատուար Սեղվիե» կազմակերպությունն է գնային առաջարկ ներկայացրել «Գլիկլազիդ 60 մգ» դեղի համար՝ 0.06833 եվրո (կամ 42,33 դրամ)՝ 1 դեղահատի համար:

Այնուհետև, դեղորայքի ձեռքբերման նպատակով կրկին գնման ընթացակարգ է կազմակերպվել, որի արդյունքում «Գլիկլազիդ 60 մգ» դեղի համար գնային առաջարկներ են ներկայացրել միայն երեք կազմակերպություններ՝ համապատասխանաբար «Ռիխտեր Լամբրոն» ՍՊԸ՝ 71,0, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ՝ 76,5 և «Արմֆարմ» ՍՊԸ՝ 44,7 դրամի չափով: Նվազագույն գին առաջարկած «Արմֆարմ» ՍՊԸ-ի գնային առաջարկը բարձր է եղել «Լե Լաբոռատուար Սեղվիե» կազմակերպության գնային առաջարկից: «Արմֆարմ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվում էր հնդկական արտադրության, իսկ «Լե Լաբոռատուար Սեղվիե» կազմակերպության կողմից՝ ֆրանսիական արտադրության դեղ:

Հաշվի առնելով նշվածը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը շարունակել է բանակցությունները «Լե Լաբոռատուար Սեղվիե» կազմակերպության հետ: Արդյունքում, 2015 թվականի հունվարի 19-ին վերջինս ներկայացրել է հինգ տարվա համար նոր իջեցված գնային առաջարկ՝ 1,8 եվրո մեկ տուփի համար կամ 0,06 եվրո մեկ հաբի համար՝ առանց ավելացված արժեքի հարկի: Ինչպես նաև, կազմակերպությունն առաջարկել է յուրաքանչյուր տարվա պահանջարկի 10 տոկոսը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրել անվճար՝ մարդասիրական օգնության հիմունքներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ